

ՎԱՍԻԼ ՄԱՐԱԶԱԽՏԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Երևանի Պատմա-Բանասիրական Հան-
դեսի մէջ, 1963 թիւ 4, Ա. Ս. Մաթեոս-
եան հրատարակած է Վասիլ Մարաջախ-
տի ժամանակագրութիւնը խորագրով
մանր ժամանակագրութիւն մը, որ աւելի
եղիպտոսի Մամլուքներուն մասին է՝ քան
թէ Հայոց: Բնական է, կ'արժէ ամէն
պատմական պատառիկ եւ ժամանակագր-
րական հատուկտոր հրատարակուած
տեսնել. եւ այս իսկ պատճառով չնորհա-
կալ ենք որ Բրիտանական թանգարանին
OR թիւ 5458 հայերէն ժամանակագրա-
կան զրչագիրէն առնելով հրատարակուե-
ր է այս պատառիկն ալ:

Հրատարակուած բնագրին մէջ անուն-
ներ կան, որոնք ստուգութեան կը կարօ-
տին. ինչպէս նաեւ թուականներ ու զէպ-
քեր, որոնք պէտք է ճշտել: Նկատի առ-
նելով որ վերջին տարիներու բնթացքին
Ապու Լ-Մահասին իպն Թազրի Պիրտի
եղիպտոսի Պատմութիւնը (1382-1469 թը-
ւականներուն) արարելէն թարգման-
ուած է՝ դիտական եւ խնամեալ կերպով
անգլիերէնի, Փրոֆ. Ուիլլեամ ֆոք-
րըրի կողմէ, եւ 1954ին ի վեր հատոր առ
հատոր կը հրատարակուի Քալիֆորնիայի
Համալսարանէն (ցարդ հրատարակուած
է վեց հատոր), Մամլուքներու մասին
կարեւորագոյն ժամանակագրական ազ-
րիւր մը զննելով մեր ձեռքին տակ, աւե-
լորդ չեմ նկատեր Վասիլ Մարաջախտի
այս հրատարակուած ժամանակագրական
պատառիկը ճշտել ու պարզել, եւ դոյն
ներկայացնել Բազմալէպի բնթեքոյնե-
րուն:

Վասիլ Մարաջախտ կը գրէ. «Ի նոյն

թիւս (1382) ի նոյեմբեր ի 2 (6)-ն, որ է
ոսմատան ժԹ (19) օրն, նստաւ Մարաջ
սուլտան՝ ու բռնեց զյԱշրաֆ սուլտանին
որդին՝ եզիր ի զնդան»:

Նախ ամսաթիւ «Ի նոյեմբեր ի 2 (6)-ն»
Մաթեոսեան սխալ կարգացած է. իր
ներկայացուցած կերպով անիմաստ է:
Ընթերցումը եւ հրատարակութիւնը պէտք
է սրբագրել «Ի նոյեմբեր ի 2 (26)-ն» որ
խակապէս ոսմատան ժԹ (19)ին կը հա-
ւասարի: Թազրի Պիրտի կը վկայէ. «Պար-
բուք դահ բարձրացաւ Ռամատան 19 (Նո-
յեմբեր 26) Զորեքարթի կէսօրին 784
(1382). կը հանդիպի (Ղպտիներու) Հա-
զուրի վերջի օրուան եւ (Ասորական Բ
զչրինի վեցերորդ օրուան» (Ա. հատոր էջ
1): Յիշուած Պարբուքը պատմութեան
մէջ ծանօթ է իբր Սուլթան ալ-Մալիք ազ-
Զահիր Պարբուք Զերբէզ ծագումով Մամ-
լուք: Աշրաֆ Սուլթանը ծանօթ է իբր
Սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուր Հաճի
կպն ալ-Մալիք ալ-Աշրաֆ Շա'պան:

Վասիլ Մարաջախտ կը ժամանակագրէ
որ 1399ի «չուալ ամսուս ի ԺԵ (15) օրն
զրին սուլտան Մարա զՊարխուխ սուլտա-
նին որդին, ու Պարխուխ կենդանի է ի
զժար հոգեվարք»: Ճիշտ է վկայութիւ-
նը: Պարբուք իր որդին իր տեղը բնարեց
երբ դեռ ողջ էր, թէեւ հոգեվարք: Թազրի
Պիրտի Պարբուքի որդին և յաջորդը կ'ան-
ուանէ Սուլթան ալ-Մալիք ան-Նասիր
Զէյն ազ-Տին Ապու Սա'ատազ Ֆարաճ,
որ քստ իրեն՝ «գահ բարձրացաւ Միջնա-
րերդին մէջ իր հօր մահուան օրուան ա-
ռաւօտուն, Ուրբաթ, Շաուուալ 15 (Յու-
նիս 20), 801 Հիճրեթի տարույ (1399),